«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» մարտի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Ս. Անանյան

ԳԲԽ-24/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի 14.03.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 14.03.2015թ. ներկայացված բողոքով «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 3 չափաբաժնի մասով, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի առաջարկները անհիմն կերպով համարվել են հրավերի պահանջներին ոչ համապատասխան, ինչի արդյունքում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝

08.02.2016թ. կայացված թիվ 01/04.1/333-16 որոշմամբ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը և 4-րդ կետը, իսկ այնուհետև խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետը և 6-րդ կետը՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ոչ գնային առաջարկը (տեխնիկական) առաջարկը որակել է անհամապատասխան և մերժել է:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներքոնշյալ աղյուսակում Ընկերությունը ներկայացրել է Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, և «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից առաջարկված ապրանքի մերժման պատճառները.

Հ/Հ	*Ընթացակարգով պահանջվող տեխնիկական բնութագիր*	*«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կոմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիր*	*Պատվիրատուի կողմից անհամապատասխանության պատճառաբանություն*
3	**Լազերային տպիչ՝** ▪ A4 ֆորմատի՝ 20 էջ/ր., ▪ տպելու խտություն՝ 1200 dpi, ▪ հիշողություն՝ 32MB, ▪ միացման տեսակը՝ Hi-Speed USB 2.0, ▪ ***<u>250 թղթի մուտքային դարակ</u>***, ▪ համատեղելի՝ Windows XP,7,8.1,10 ՕՀ-երի հետ, ▪ 220-240V 50/60Hz, ▪ անհրաժեշտ մալուխներ, երաշխիքային ժամկետը՝ Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 տարի:	**Լազերային տպիչ՝** XEROX Phaser 3020BI ▪ A4 ֆորմատի՝ 20 էջ/ր., ▪ տպելու խտություն՝ 1200 dpi, ▪ հիշողություն՝ 128MB, ▪ միացման տեսակը՝ Hi-Speed USB 2.0, Wi-Fi b/g/n ▪ ***<u>150 թղթի մուտքային դարակ</u>***, ▪ համատեղելի՝ Windows XP,7,8.1,10 ՕՀ-երի հետ, ▪ 220-240V 50/60Hz, ▪ անհրաժեշտ մալուխներ, երաշխիքային ժամկետը՝ Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 տարի:	Պատվիրատուն անհամապատասխան է համարել այն փաստը, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կոմից առաջարկված XEROX Phaser 3020BI տպիչի ***<u>մուտքային դարակը նախատեսված է 150 էջի</u>*** համար:

****Գրությանը կցում ենք ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04 ծածկագրով Ընթացակարգի հրավերի պահանջվող տեխնիկական բնութագրի պատճենը, ինչպես նաև «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի անվանումն ու տեխնիկական բնութագրի պատճենը(Հավելված 5)***

Ընկերությունը հայտնել է, որ *պատվիրատուի կողմից չի նշվել թե մուտքային դարակի 250 թուղթ տարողությունը ինչ ֆորմատի և ինչ խտության թղթի համար պետք է նախատեսված լինի:*

XEROX Phaser 3020BI տպիչի մուտքային դարակը նախատեսված է 150 հատ A4 ֆորմատի և 80գ/մ^2 խտությամբ թղթի համար: Սակայն XEROX Phaser 3020BI տպիչի մուտքային դարակը կարող է տանել ***300 հատ A5 ֆորմատի և 80գ/մ^2 խտությամբ թուղթ***, ինչպես նաև ***260 հատ A4 ֆորմատի և 45գ/մ^2 խտությամբ թուղթ***, և, Ընկերության կարծիքով, Պատվիրատուն չի կարող պնդել, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնի մասով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխան չէ հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Ընկերությունը խնդրել է վերանայել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 08.02.2016թ. կայացված թիվ 01/04.1/333-16 որոշումը, և չընդգրկել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***քանի որ փաստացի «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից չի խախտվել նշյալ որոշման մեջ նշված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետը և կեղծ տվյալ չի ներկայացվել:***

2. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ դատական դեպարտամենտը 24.12.2015թ. ԴԴ-3-Ե-7581 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Ընթացակարգի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը:

3. ԳԲԽ-24/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-24/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 24.12.2015թ. ԴԴ-3-Ե-7581 գրության հիման վրա, 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. Կենտրոնը 08.02.2016թ. թիվ 01/04.1/333-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել եզրակացություն, որով ամրագրել է Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ մասի «բ» կետով նախատեսված խախտում թույլ տալու հանգամանքը և խնդրել ապահովել մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտեր ներկայացվելու վերաբերյալ պատվիրատուների կողմից Կենտրոնին տեղեկատվության տրամադրումը:

4. ԳԲԽ-24/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի 14.03.2016թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենք (այսուհետ նաև՝ Օրենք) 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց սույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրիմասին ծանուցում հրապարակելու,

բ. սույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասինՀայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 123-րդ կետի համաձայն՝ «եթե ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու համար չկան բավարար հիմքեր, ապա կենտրոնը նույն կարգի 122.2-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ գրավոր եզրակացություն և ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն...»

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ Ընկերության կողմից բողոքում նշված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.02.2016թ. թիվ 01/04.1/333-16 գրությունը հանդիսանում է Կարգի 123-րդ կետով նախատեսված և ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված եզրակացություն, որով Կենտրոնն ամրագրել է մասնակցի կողմից թույլ տրված խախտումը և հայտնել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որ դրան հաջորդող տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում կկազմակերպի բողոքարկման գործընթաց գնումների բողոքարկման խորհրդում:

Վերը նշված իրավական նորմերը հստակ ամրագրում են նաև, որ Խորհուրդը կարող է քննել միայն պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները, գործողությունները կամ անգործությունը, մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, վիճարկվող գրությունը հանդիսանում է Կենտրոնի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրված եզրակացություն, ինչը վերանայելը չի բխում Խորհրդի՝ Օրենքով սահմանված լիազորություններից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի 14.03.2016թ.՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 08.02.2016թ. կայացված թիվ 01/04.1/333-16 որոշումը վերանայելու և «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չընդգրկելու մասին բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-24/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան